

ԻՆՉՈՐ՝ Է ՀԱՐԿԱՎՈՐ ՊԱՏՎԱՍՏԵԼ ԵՐԵԽԱՅԻՆ

ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԸ՝

ԱՆՎՏԱՆԳ ԵՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՑ:
ԿԱՆԱՈՒՄ ԵՆ ԾԱՆՐ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ:
ՆՊԱՍՏՈՒՄ ԵՆ ԿՈԼԵԿԿՏԻՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆԸ:
ՊԱՅՊԱՆՈՒՄ ԵՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ, ԲԱՐՁՐԱՑՆՈՒՄ ԵՆ ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԿԱՐԱԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ:

ԱՐԴՅՈ՞Ք ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԸ ԾԱՆՐԱԲԵՌՆՈՒՄ ԵՆ ԵՐԵԽԱՅԻ ԻՍՈՒՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ


Երեխան ծնվելու պահից առնչվում է հազարավոր հակածինների՝ մանրէների և վիրուսների հետ, որոնք հանդիպում են սննդի, օդի, տարբեր առարկաների, ինչպես նաև մարդկանց ու կենդանիների հետ շփման ընթացքում:
Առողջ իմունային համակարգը արձագանքում է այդ հակածիններին՝ արտադրելով պաշտպանիչ գործոններ՝ հակամարմիններ: Իմունային համակարգը կարող է միաժամանակ պայքարել հազարավոր տարբեր հակածինների դեմ:

Պատվաստանյութերը պարունակում են շատ փոքր քանակի հակածիններ՝ համեմատած այն քանակի հետ, որին երեխան առնչվում է առօրյայում:

Պատվաստանյութերը «սովորեցնում են» իմունային համակարգին անվտանգ պայմաններում ճանաչել և պայքարել վտանգավոր մանրէների դեմ՝ ձևավորելով պաշտպանական հիշողություն:

ԻՆՉ ԱՆԵԼ ՊԱՏՎԱՍՏՈՒՄԻՑ ԱՌԱՋ ԵՎ ԸՆԹԱՑՔՈՒՄ

- Ավագ տարիքի երեխային պատմեք պատվաստումների կարևորության մասին, բացատրեք՝ ինչպես է կատարվելու պատվաստումը:
- Եթե երեխան սնվում է կրծքի կաթով, կերակրեք երեխային պատվաստումից առաջ, կարող եք կերակրել նաև ընթացքում, ինչպես նաև պատվաստումից հետո:
- Ընթացքում շեղեք երեխայի ուշադրությունը, որպեսզի շատ չլարվի, հանգստացրեք նրան սիրելի խաղալիքով, կարող եք առաջարկել ջուր:



ՀՀ ԻՍՈՒՆԻՉԱՑԻԱՅԻ ԱՉԳԱՅԻՆ ՕՐԱՑՈՒՅՑ 0-17 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ծնունդ	6 շաբ	12 շաբ	18 շաբ
Հեպ Բ 0-24 Ժ ԲՑԺ* 0-48 Ժ	ԿԴՓ/ՀԻԲ/ Հեպ Բ/ԻՊՎ*	ԿԴՓ/ՀԻԲ/ Հեպ Բ/ԻՊՎ*	ԿԴՓ/ՀԻԲ/ Հեպ Բ/ԻՊՎ*
	Ռոտա վիրուս	Ռոտա վիրուս	
	Պնևմակոկ	Պնևմակոկ	Պնևմակոկ
	Մենինգակոկ լրացուցիչ		

6 ամս	12 ամս	18 ամս	4-6 տ
		ԿԴՓ/ԻՊՎ*	ԿԴՓ/ ԻՊՎ*
	ԿԿԽ***		ԿԿԽ***
	Ջրծաղիկ		Ջրծաղիկ լրացուցիչ
Մենինգակոկ լրացուցիչ			
Գրիպ (ամեն տարի) ¹			

11-18 տ	13-15 տ	15-16 տ	17 տ
		Փղկ**	
		Պնևմակոկ	
Մենինգակոկ լրացուցիչ			
	ՄՊՎ ²		
		Մենինգակոկ	
		ՎՀԱ	
			Տուլարեմիա
Գրիպ (ամեն տարի) ¹			

* ԿԴՓ՝ Կապույտ հազ, Դիֆթերիա, Փայտացում, ՀԻԲ՝ Հեմոֆիլուսային Բ տիպի վարակ, Հեպ Բ՝ Հեպատիտ Բ, ԲՑԺ՝ տուբերկուլոզային վարակի դեմ, ԻՊՎ՝ Ինակտիվացված պոլիոմիելիտային վարակ

** Փղկ՝ Փայտացում, դիֆթերիա, կապույտ հազ

***ԿԿԽ՝ Կարմրուկ, Կարմրախտ, Խոզուկ

Պնևմակոկ, Մենինգակոկ, ՎՀԱ (վիրուսային հեպատիտ Ա), Տուլարեմիա ՀՀ-ում կատարվում է տղաներին

¹ Գրիպ – 6 ամսականից մինչև 9տ երեխաները, եթե ստանում են առաջին անգամ, ապա պետք է ստանան 2 դեղաչափ՝ 4 շաբաթ միջակայքով:

² ՄՊՎ՝ Մարդու Պապիլոմավիրուս

ԻՆՉ ԱՆԵԼ ՀԵՏՊԱՏՎԱՍՏՈՒՄԱՅԻՆ ՌԵԱԿՑԻԱՆԵՐԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԴԵՊՁՈՒՄ

- Տեղային ռեակցիաների զարգացման դեպքում (այտուց, ցավ, կարմրություն) հարկավոր է ներարկման տեղում դնել սեկյակային ջերմաստիճանի ջրով թրջոցներ:
- Ջերմության բարձրացման, արտահայտված անհանգստության, լացի դեպքում կարելի է կիրառել պարացետամոլ կամ իբուպրոֆեն (3 ամսեկանից բարձր երեխաների համար)՝ համապատասխան դեղաչափերով:

ԻՆՉ ՉԱՆԵԼ ՊԱՏՎԱՍՏՈՒՄԻՑ ԱՌԱՋ ԵՎ ԸՆԹԱՑՔՈՒՄ

- Մինչ պատվաստումը կարիք չկա կատարել որևէ հետազոտություն:
- Մինչ պատվաստումը և դրանից հետո մի՛ տվեք երեխային հակաալերգիկ, ցավազրկող կամ որևէ այլ դեղորայք (բացառությամբ որևէ ուղեկցող հիվանդությամբ պայմանավորված արդեն իսկ ընդունվող դեղերի):
- Պատվաստումից հետո ներարկման տեղում ջրից բացի չի կարելի քսել այլ հեղուկներ, քուռքներ կամ դնել սառույց:
- Կարիք չկա փոխել երեխայի առօրյան պատվաստումից հետո (լոգանք, զբոսանք և այլն):
- Երբեք մի՛ վախեցրեք երեխային ներարկումով:

Ե՞ՐԲ ԴԻՍԵԼ ԲԺՇԿԻ

- Դիմեք բժշկի, եթե երեխան ունի
- 2 օրից ավել տևող ջերմություն,
 - Ներարկման տեղում արտահայտված այտուց, կարմրություն,
 - Ցանկացած այլ գանգատների դեպքում, որոնք զարգացել են պատվաստումից հետո և նման չեն ակնկալվող հետապատվաստումային պատասխանին:

ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐՆ ԱՎԵԼԻ ՇԱՏ ՄԱՐԴԱՅԻՆ ԿՅԱՆՔԵՐ ԵՆ ՓՐԿԵԼ, ԶԱՆ ՊԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՃ ՈՐԵՎԷ ԱՅԼ ԲԺՇԿԱԿԱՆ ԳՅՈՒՑ:

